ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

2026 թվականի օգոստոսի 14 թիվ 419 -Ա

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ՄՈՒՂՆՈՒ Մ.ԱՇՃՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՍԱՌԱ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ՉՕԳՏԱԳՈՐԾԱԾ ՄԱՍԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 159-րդ հոդվածի 1-ին մասով, 160-րդ հոդվածով, 163-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 1550-Լ որոշմամբ հաստատված 1-ին հավելվածի 20-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ հավելվածի 60-րդ կետով և հիմք ընդունելով Ս. Ալեքսանյանի 2026 թվականի օգոստոսի 14-ի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Մուղնու Մ. Աշճյանի անվան հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող Սառա Ալեքսանյանին տրամադրել ամենամյա արձակուրդի չօգտագործած մասը 2024-2025 թվականների ուսումնական տարվա համար 5 աշխատանքային օր տևողությամբ 2026 թվականի օգոստոսի 20-ից օգոստոսի 26-ը ներառյալ:
2. Սառա Ալեքսանյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Մուղնու Մ. Աշճյանի անվան հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգողի պարտականությունների կատարումը ժամանակավորապես դնել «Մուղնու Մ. Աշճյանի անվան հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Անուշ Փարեմուզյանի վրա:
3.Սառա Ալեքսանյանին աշխատանքի մեջ համարել 2026 թվականի օգոստոսի 27-ից:

Recoverable Signature

Անդամագրի՝
ՍԵՐԳԵՅ ՄՈՎՍԻՍՅԱՆ
3309890457

X

Signed by: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ

2026թ. օգոստոսի
ք. Աշտարակ